

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՕՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՍԱՀՏՈՅՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՂՆՎԱԾ ԳՐԱՎՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայագիտության ներկայիս կարևորագույն խնդիրներից մեկն, անշուշտ, Հայաստանի տարածքից հայտնաբերված բոլոր գրավոր հուշարձանների համահավաքի հրատարակումն է: Այդ ոլորտում հատկապես անմխիթար է նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթի վիճակը, չնայած այն հանգամանքին, որ կուտակվել է հսկայական քանակությամբ նյութ:

Նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված, բազմառիթմ գրակիր հուշարձանները, ըստ ծագման և պատկանելության, բաժանվում են չորս խմբի.

ա) Հայաստանում ստեղծված և մեր նախնիների կողմից կիրառված պատկերագրային համակարգերով ստեղծված հուշարձաններ,

բ) արձանագրություններ, որոնք գրված են օտար ծագում ունեցող, բայց Հայաստանի բնիկների կողմից կիրառված գրերով.

գ) Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից ստեղծված բնագրեր,

դ) ստեղծվածային ծագումով և անհայտ նշանակությամբ նշանագիր հուշարձաններ:

Խմբերից յուրաքանչյուրին կարելի է մվիբել բազմառիթմ ուսումնասիրություններ: Այս հրապարակումով նպատակ ունենք անդրադառնալու միայն երրորդ խմբի հուշարձաններին, որոնք (որքան էլ տարօրինակ է) ի մի չեն բերվել ու համակարգվել մինչ օրս:

Հայկական լեռնաշխարհում Զ. ա. 3-րդ հազարամյակից սկսած հանդիպում են օտար գրերով և լեզուներով գրառված զանազան իրեր և հուշարձաններ, որոնց հեղինակները տեղացիները չեն: Սրանք, հասկանալիորեն, չեն կազմում հայաստանյան դպրության բաղկացուցիչ մասը, սակայն նախամաշտոցյան Հայաստանի պատմության կարևոր և անգնահատելի սկզբնաղբյուրներ են, մանավանդ այն դեպքերում, երբ չու-

նենք տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ տեղացիների թողած վկայագրեր: Ստորև կներկայացնենք ինչպես եզակի օրինակներով հանդիպող բնագրերը, այնպես էլ միևնույն գրերով և լեզուներով կանգնեցված արձանագրությունների խմբերը՝ համատեղակի կանգ առնելով դրանց պատմական նշանակության խնդրին:

Նարամ-Սուենի կոթողը Դիարբեքիի շրջանում: Օտարների կողմից Հայկական լեռնաշխարհում թողած հնագույն արձանագրությունը վերաբերում է Հայաստանի Ք. ա. XXIII դարի պատմության կարևոր մի իրադարձության՝ Աքադի տիրակալ Նարամ-Սուենի (Նարամ-Սինի) դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքներից մեկին: Սիջագետքից և Փոքր Ասիայից հայտնաբերված մի շարք բնագրեր վկայում են Արման(իում) երկրի դեմ նրա ձեռնարկած պատերազմի մասին¹, և Նարամ-Սուենի արձանագրությամբ Դիարբեքիի մոտակա Փիր Հուսեին հնավայրից գտնված ու Ատամբուլի Հին Արևելքի թանգարան տեղափոխված քարակոթողը, միանգամայն իրավացիորեն, համարվում է վերջինիս իրեղեն ապացույցը: Արձանագրության ոչ լիովին պահպանված չորս սյունակներում ընթերցվում է.

«I. Աստված(ային) Նարամ Սուենը, Հորը ...

II. Էնկի (Հայա) աստվածը չորս կողմերում: Ով որ շրջի կուրծքը (առջևը) ...

III. տեղադրի և հիմքը ծածկի (ռչնչացնի), ով այս արձանագրությունը փոխի (եղծանի), Ինաննա (Իշթար) դիցունին թո՛ղ ...

IV. պատաստտի և նրա ընտանիքը վերացնի, նրա ժառանգները և անունները ...»²:

*Թիշարիի (Թիշաբալի)՝*³ արձանագրությունն *Ուրբիշից:* Մինչ օրս հայտնի հնագույն խտրիներն արձանագրությունը՝ գրված քաղաքական սեպագրով (կանգնեցված Ք. ա. XXIII–XXI դարերի միջև) կապվում է Ուրբիշ քաղաքի հետ, որը գտնվել է Մասիուս/Մասիոն լեռների հարավային լանջերին, ներկայիս թուրք–սիրիական սահմանի մոտ, Մարդին քաղաքից հարավ (Թել Ամուդա հնավայր)⁴: Այն վերաբերում է անդրաշխարհի Ներգալ աստծո պաշտամունքին նվիրված տաճարի կառուցմանը և, ինչպես համանման այլ արձանագրությունները, ավարտվում է կատույցը ռչնչացնողներին ուղղված, աստվածներից ակնկալվալ անեծքի բանաձևով. «*Թիշարին էմդանմ՝ է Ուրբիշի: Տաճարը Ներգալի (նա) կատուցեց, տաճարն այդ Լուրադագան թո՛ղ պահպանի: Նա, ով այն իրոք ռչնչացնի, նրան Լուրադագան թո՛ղ ռչնչացնի, Անը թո՛ղ չլնի աղոթքը նրա, ով այն իրոք ռչնչացնի, նրան թո՛ղ՝ NIN.NA.GAR⁵, Շինիզե և Թեշուր աստվածները անթիվ–անհամար անգամ նզովեն»⁶:*

Արձանագրությունը Հայաստանի պատմության ուսումնասիրության տեսանկյունից ունի կրկնակի կարևորություն: Նախ այն կարևոր

վկայագիր է Ք. ա. III հազարամյակի վերջին դարերում մեր երկրի հարավ-արևմտյան շրջանների հոգևոր-պաշտամունքային իրավիճակի մասին, ապա, ըստ Ի. Մ. Դյակոնովի. «այս արձանագրության լեզուն նույնքան մոտ է ուրարտերենին, որքան խուրեքերենին, և, ըստ էության, կարող է դիտարկվել ոչ միայն որպես հին խուրեքերեն, այլ նաև՝ հին ուրարտերեն»⁷:

Ասուրերեն գրությանը թուրք Դիարբեքիից: Դիարբեքիի շրջանից գտնվել և ներկայումս Եվրոպայի մասնավոր հավաքածուներից մեկում պահվում է 1, 09 մետր երկարությամբ բրոնզե թուր, որի կենտրոնում առկա է Ք. ա. XIX–XVIII դդ. քվագրվող հին ասուրերեն սեպագիր արձանագրություն. «Նուրշալումի»⁸ տիրակալին. նրա տեր Լուլուսանումը՝ որդին Ազիզումի, իր կյանքի և իր որդու կյանքի համար 12 մինա (քաշով)⁹ թուր նվիրեց (քերեց)»¹⁰:

Սեպագիր արձանագրությամբ այս բրոնզե թուրը, որն իր ժամանակաշրջանի հազվագյուտ գտածո է Հայկական լեռնաշխարհից, կարող է լույս սփռել մեր երկրի (հատկապես հարավ-արևմտյան շրջանների) Ք. ա. XIX–XVIII դարերի պատմության որոշ անհայտ հարցերի վրա¹¹:

Սեպագիր արձանագրությամբ հինբաբելական կնիք Նախիջևանի շրջանից: Հրատարակելով 1981 թ. Մեծամորի պեղումներից հայտնաբերված եգիպտական հիերոգլիֆներով սարդիոնե գլանաձև կնիքի արձանագրությունը՝ Բ. Բ. Պիտրովսկին գիտական շրջանառության մեջ մտցրեց Նախիջևանի շրջանից գտնված հինբաբելական մի կնիք (Ք. ա. XVIII–XVII դդ.), որի լուսանկարը նրան է տրամադրել հայտնի հնագետ Ա. Ա. Իեսսենը: Կնիքին պատկերված է աստվածությանը ուլ գոհարերով մարդ, որի կողքին առկա է խիստ վնասված սեպագիր արձանագրություն¹²:

Մեծամորից գտնված գորտ-կշռաքարը: Ք. ա. II հազարամյակի առաջին կեսով քվագրվող հնագիտական իրերի մեջ առանձնապես հիշատակելի է Մեծամորից գտնված գորտ-կշռաքարը, որը կրում է Բաբելոնի քասիթական արքաների անունները: Այն պատրաստված է եղել ագաթից և սեպագրերով կրել է համառոտ արձանագրություն. «*Լ սիկդ. Ուլամ-Բուրիաշի՝ որդու Բուռնա-Բուրիաշի*»¹³:

Քասիթական դինաստիան Բաբելոնում իշխել է Ք. ա. XVI–XII դարերում: Մինչ այդ՝ Ք. ա. XVIII դարում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններից քասիթները արշավանք էին ձեռնարկել դեպի Բաբելոն. մի շարք փաստեր ցույց են տալիս, որ քասիթների բնօրրանը եղել է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքը, որտեղից էլ ծավալվել է նրանց տիրապետությունը¹⁴: Թերևս դրանով են պայմանավորված Հայկական լեռնաշխարհի և քասիթական Բաբելոնի ջերմ հա-

քարերությունները Բ. ա. XVI–XIII դարերում, որի առանձին դրսևորումներ գտնում ենք հնագիտական հուշարձաններում¹⁵:

Ասորեստանի արքաների՝ Հայաստանից գտնված արձանագրությունները: Օտարների կողմից նախանաշտոցյան Հայաստանում թողնված բնագրերի շարքում նշանակալի տեղ են գրավում Ասորեստանի արքաների գրավոր հուշարձանները, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են Հայկական լեռնաշխարհի Բ. ա. II հազարամյակի երկրորդ և I հազարամյակի առաջին կեսերի պատմության վերաբերյալ:

Խոջալուի դամբարաններից մեկում գտնված ագաթե մի ուլունքահատիկ կրում է ասուրերեն արձանագրություն՝ «Պալատ Ադադ-Ներարիի տիեզերքի արքայի»: Ասորեստանն ունեցել է Ադադ-Ներարի անունով մի քանի արքաներ: Խոջալուի տվյալ դամբարանից գտնված նյութերը քվադրվում են Բ. ա. I հազարամյակի սկզբով, սակայն սեպագիր արձանագրության հնագրական առանձնահատկությունները ցույց են տալիս, որ այն Բ. ա. XIII դարի գործ է, ուստի պետք է վերագրել այդ դարում իշխած Ադադ-Ներարի Ա արքային: Թե երբ և ինչպես է այն հասել Արցախ, հայտնի չէ. դամբարանը, համեմայն դեպս, քվադրվում է Բ. ա. I հազարամյակի սկզբով¹⁶:

Թիզլաթալասար Ա-ի (Բ. ա. 1115–1077 թթ.) Ասորեստանի տարածքից գտնված արձանագրությունները բազմիցս հիշատակում են նրա արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ¹⁷: Դրանց մասին վկայություններ են պահպանվել նաև տեղում՝ «Տիգրիսի թունելի»¹⁸ և Մամազկերտի շրջաններում: «Տիգրիսի թունելի» արձանագրությունը հետևյալն է.

«Աշշուրի, Շամաշի և Ադադի՝ մեծ աստվածների, իմ տիրակալների օգնությամբ ես՝ Թուկուլթիասպալ-Շարրա արքան Ասորեստանի, որդին Ասորեստանի արքա Աշուրըեշի՝ որդու Մութաքիլ-Նուբուտի՝ արքայի Ասորեստանի, նվաճողն Արևմտադքի Մեծ ծովից և ծովից Նաիրիի, երրորդ անգամ արշավեցի դեպի Նաիրի»¹⁹:

Մամազկերտի մերձակայքում (Յունջալու) գտնվող արձանագրությունը ևս վերաբերում է նրա հյուսիսային արշավանքին. «Թուկուլթիասպալ-Շարրա՝ արքա հզոր, արքա տիեզերքի, արքա Ասորեստանի, արքա աշխարհի չորս կողմերի, նվաճողը Նաիրիի երկրների՝ Թումնիից մինչև Դայանի, նվաճողը Խարխի երկրի՝ մինչև Վերին ծովը»²⁰:

Ասորեստանյան հաջորդ արքան, որի թողած գրավոր հիշատակությունը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, Աշարմասիրապալ Բ-ն է (Բ. ա. 884/3–859 թթ.): Քարխից (Քուրխից) հայտնաբերված կոթողի վրա քանդակված են այդ արքայի և նրա հաջորդ Սալմանասար Գ-ի (Բ. ա. 859–824 թթ.) արձանագրությունները²¹: Աշուրմասիրապալ Բ-ն պատմում է Բ. ա. 879 թ. դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան,

իսկ Սալմանասար Գ-ն իր իշխանության առաջին տարիներին դեպի լեռնաշխարհի հարավային շրջանները կատարած արշավանքների մասին²²:

«Տիգրիսի բունելի» մյուս չորս արձանագրությունները²³ փորագրվել են Սալմանասար Գ-ի հրամանով: Դրանցից երկու վատ պահպանվածներում ընթերցվում են միայն արքայի նկատմամբ աստվածների բարեհաճության մասին սկզբնամասերը, նրա տիալոսաշարը, արևելքից մինչև արևմուտք կատարած նվաճումների մասին առանձին հատվածներ: Մյուս երկուսում (27 և 17 տողերից բաղկացած), աստվածների բարեհաճության մասին սկզբնամասերից և ախտոտաշարերից բացի, ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի ռազմա-քաղաքական իրադրության մասին²⁴: Նկատի ունենալով դրանց կարևորությունը՝ ստորև բերում ենք բնագրերի՝ Հայկական լեռնաշխարհին վերաբերող հատվածները.

«...նվաճողը երկրների՝ Նաիրիի ծովից, մինչև Մեծ ծովն [Արև]մուտքի: Խեթերի երկիրը՝ մինչև նրա բոլոր սահմանները, Սե[լիդու] երկիրը, Դայամի, Սուխմու երկիրները, Արգաշկուն քաղաքը՝ արքայական քաղաքն Արամու ուրարտացու, Գիլգան և Խուրուշկիա երկրները՝ Տիգրիս գետի ակունքից, մինչև ակունքը Ծոռուս գետի, Ներքին Չամուայի ծովից մինչև Բաղդեսկան ծովը²⁵ ես խոնարհեցրի իմ ոտքերի...»:

«...նվաճողը երկրների՝ Նաիրիի ծովից, մինչև Մեծ ծովն [Արև]մուտքի: Խեթերի երկիրը՝ անգամ մինչև նրա բոլոր սահմանները, ես հնազանդեցրի և ...[...], Էն[զ]իա[ե] երկրի լեռնանցքը [ես մտա], երկրները Սուխմու, Դայամի և Ուրարտու, անգամ մինչև նրա (Ուրարտուի) սահմանները, ես հնազանդեցրի: Գիլգան երկրի վրա ես գնացի, գիլգանցիների հարկը ես ստացա: Երբորդ անգամ գնացի Նաիրիի վրա և Տիգրիսի ակունքի մոտ գրեցի անունն իմ»²⁷:

Հայկական լեռնաշխարհի տարածքում Սալմանասար Գ-ի ևս մեկ արձանագրություն է հայտնաբերվել Քենքից: Այն պատմում է ասորեստանյան արքայի՝ իր թագավորության երկրորդից չորրորդ տարիներին դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների մասին՝ պարունակելով տվյալներ, որոնք հայտնի չեն նույն արքայի այլ արձանագրություններից²⁸:

Նախամաշտոցյան Հայաստանում հիշատակություն բողած ասորեստանյան վերջին արքան Բ. ա. 705–681 թթ. իշխած Սինախերիբն (Սենեքիբին) է, որի արձանագրությունը գտնվում է Ջուդի լեռան²⁹ վրա: Այն վերաբերում է արքայի գահակալության հինգերորդ տարուն (Բ. ա. 701 թ.)³⁰: Հաղորդման համաձայն՝ Ասորեստանի արքան արշավում է Կուտմուխու (Կադմեսա տուն) մարզի սահմանին գտնվող Թումուրրա,

Շաբին, Խալբուդա, Կիաշա, Էզամա, Կուա և Կանա բնակավայրերը, որոնք «արծվաբնի մնամ տեղադրված են Նիքուր լեռան բարձունքներուն» և հնում՝ նրա նախնի արքաների օրոք, «հզոր էին ու հպարտ, չէին ճանաչում սարսափը տիրապետության»։ Դժվարին արշավից հետո (որն, ըստ արձանագրության, ավարտվել է ասորեստանցիների հաղթանակով) արքայի գործն ուղղություն է վերցնում դեպի հարևան Դայան երկրի Ուկկու բնակավայրը, գրավում այն շրջակա 33 այլ բնակավայրերի հետ միասին, հրդեհում, ավերածությունների և թալանի ենթարկում դրանք։ Այնուհետև նշվում է արքայի կողմից տվյալ արձանագրությունը կանգնեցնելու մասին, որն ավարտվում է այն ոչնչացնողներին ուղղված անեծքի բանաձևով³¹։

Ասորեստանյան արձանագրություններ Մանայի թագավորության տարածքից³²։ Այս խմբի չորս արձանագրություններից երեքը հայտնաբերվել են Ուրմիո լճից հարավ-արևմուտք ընկած Հասանլու հնավայրից³³։ Դրանցից մեկը 1964 թ. գտնված քարե սկավառակաձև աման է (սկիհ կամ սկուտեղ), որը պարունակում է ասուրերեն գրված արձանագրություն։ Վերջինիս տառադարձման ու թարգմանության հարցերում մասնագետների կարծիքները տարամիտվում են։ Առաջարկվել են հետևյալ ընթերցումները.

«Բաուրիի պալատը Իդի երկրի, Շամաշ-ուշիշի (Պ)»³⁴,

«Բաուրիի Իդի երկրի արքայի պալատը՝ ձեռնված արևի աստված Ուշիշիին»³⁵,

«Պալատը Բահուրիի, Ուշի-շիի լեռնային օթևանի»³⁶։

«[Պառկանում է] Բաուրիի Իդի երկրի արքայի պալատին, ձեռնված արևի աստծուն»³⁷։

Արձանագրությունը, բոլոր դեպքերում, թվագրվում է միջինասորեստանյան դարաշրջանի սկզբից մինչև Ք. ա. 800 թ. ընկած ժամանակահատվածով³⁸։ Ուշագրավ է, որ Ք. ա. 855 թ. Սալմանասար Գ-ն Չամուու երկրի դեմ կատարված արշավանքի առնչությամբ հիշատակում է Իդի անունով երկիր և քաղաք³⁹, որի առնչությունն այս արձանագրության հետ դժվար է որոշել։

Մյուս երկու արձանագրությունները պահպանվել են քարե սկահակի և քարե մականի կամ գուրգի վրա, որոնցից առաջինը պարունակում է Զասիթական Բաբելոնիայի թագավոր Կադաշմին-Էնլիլի (I-ի՝ Ք. ա. 14-րդ դար, կամ II-ի՝ Ք. ա. XIII դ. առաջին կես) անունը, իսկ երկրորդում առկա է «Աշշուր-Ուրալիթի պալատը» արտահայտությունը⁴⁰։ Խոսքն, ամենայն հավանականությամբ, վերաբերել է Ասորեստանի նույնանուն արքային, որը կառավարել է Ք. ա. 1365/3–1330/1328 թվականներին։

Մերժումյան ավագանից հայտնաբերված և ենթադրաբար Ատրեստանի Արբախ քաղաքից ծագող չորրորդ արձանագրությունը վտրագրված է բրոնզե արձանիկի վրա: Տասներկու առդանոց արձանագրությունը բարենադրանք է՝ ձոնված Արբախի Իշտար աստվածուհուն՝ հանուն ասորեստանյան Աշշուր-դան I (Ջ. ա. XII դ.) արքայի. բնագրի հեղինակը Արբախ քաղաքի դավիր Շամշի-Բեկն է՝ Ներգալ-նադին-ախսխեի որդին⁴¹:

Ինչ վերաբերում է արձանագրված այս իրերի ծագմանը, ապա դրանք (գոնե վերջին երեքը), ամենայն հավանականությամբ, ներմուծվել են դրսից, ինչը կարող է վկայել Ատրեստանի և Բաբելոնիայի հետ տարածաշրջանի ունեցած ակտիվ վախճարաբերությունների մասին:

Արմավիրից գտնված սեպագիր երեք սաղիկները: Օտարագիր արձանագրություններից են նաև 1980-ական թվականների սկզբին Արմավիրից գտնված սեպագիր սաղիկների երեք բեկորները: Դրանք կալվե սաղիկների մասեր էին, որոնցից ամենամեծը և լավ պահպանվածը երկու երեսին ուներ ընդամենը 28, երկրորդը՝ 16 (նույնպես երկու երեսին), իսկ երրորդի մի կողմում պահպանվել է 9 սաղ: Առաջինը Ի. Մ. Դյակոնովը և Ն. Բ. Յանկովսկայան վերծանեցին որպես «Գիլգամեշ» էպոսի թատերականացված մի հատված՝ գրված էլամերեն լեզվով, փորձելով նույն համատեքստում դիտարկել մյուս երկու բեկորներից ընթերցված առանձին բառերը (ենթադրաբար, դրանք կարող էին պատկանել թատերախմբի անդամներին): Բնագրերը թվագրվեցին Ջ. ա. VIII դարով, իսկ «Գիլգամեշ» էպոսի մի հատվածի սցենարի առկայությունը Արգիշտիխիլի-Արմավիրում ենթադրաբար կապվեց էլամա-ուրարտական հակաասորեստանյան դաշինքի հետ, որը կարող էր ամրապնդված լինել Սարգուրի Բ-ի (Ջ. ա. 764-735 թթ.) և էլամի արքայադստեր ամուսնությամբ, ինչն էլ զուգադիպած լիներ արքայի գահակալման հանդեսին, որի ժամանակ էլ հնարավոր է, որ տեղի ունեցած լիներ էլամական թատերախմբի բնականացումը⁴²:

Կարճ ժամանակ անց նրանց վերծանությունը կասկածի ենթարկվեց, վերանայվեց, և առաջարկվեց արմավիրյան երեք բնագրերն ընթերցել էլամերեն, սակայն մեկնաբանել որպես տնտեսական բովանդակության մամակների հատվածներ, որոնք պետք է թվագրվեն Ջ. ա. VI դարի երկրորդ կամ V դարի առաջին կեսով⁴³...

Եթե վերջնականապես հաստատվի սաղիկների էլամերեն ընթերցումը, նախամաշնոցյան Հայաստանում (Ջսերքսեսի արձանագրության էլամերեն բաժնի հետ միասին) կունենանք էլամերեն չորս արձանագրություններ:

Եզիպտական եփեղգիիֆներով իրերը: Հայաստանից գտնված օտարագիր առարկաների մեջ հետաքրքիր խումբ են կազմում եզիպտա-

կան մեհենագրերով իրերը: Մինչ օրս Հայաստանից հայտնաբերվել են եգիպտական հիերոգլիֆներ կրող չորս կնիքներ և երկու ուլաքահատիկներ:

Դրանցից հնագույնը 1981 թ. Մեծամորի պեղումներից հայտնաբերված եգիպտական հիերոգլիֆ արձանագրությամբ սարդիոնե գլանաձև կնիքն է: Այն կրում էր Ք. ա. XV դարում իշխած Բաբելոնի քասիթական հարստության տիրակալ Կուրիզալզու Ա-ի անունը: Բաբելոնը քասիթական ժամանակշրջանում կրում էր նաև «Մեծ Սանգար» անունը, որն էլ ամկա է կնիքի գրության մեջ. «*Կուրիզալզու՝ Մեծ Սանգար երկրի առաջնորդ*»⁴⁴:

Մյուս երեք կնիքները (գտնված Վանից, Անիից և Արմավիրից) բզեզատեսք են: Վանից և Արմավիրից հայտնաբերված բզեզատեսք կնիքները կրում են Եգիպտոսի XVIII հարստության փարավոն Թութոս Գ-ի (Ք. ա. XVI-XV դդ.) գահանունը՝ «Մեհենպերրա»: Այդ գահանունով կնիքները, որ, թերևս, ունեցել են խորհրդանշական ինչ-որ իմաստ, լայն տարածում են գտել և գործածվել մինչև XXV և XXVI դիմաստիաների իշխանության ժամանակաշրջանը (Ք. ա. VIII-VI դդ.)⁴⁵: Ե՛վ բզեզատեսք երեք կնիքները, և՛ երկու ուլաքահատիկները (գտնված Կարմիր բլուրից), ըստ Բ. Բ. Պիտոտլսկու, պետք է թվագրել Վանի թագավորության ժամանակաշրջանով⁴⁶:

Քսերքսեսի եռակգու արձանագրությունը Վանում: Աքեմենյան Դարեհ Ա-ի որդի և հաջորդ Քսերքսես արքան հայտնի դարձավ Անուրամագդայի պաշտամունքին նվիրված կրոնական բարեվախտումով: Իր գործունեությանը նվիրված բազմաթիվ արձանագրություններից մեկը նա թողել է Վանի ժայռի հարավային կողմում (գետնից շուրջ 18 մ բարձրության վրա)՝ գրված երեք լեզուներով (պարսկերեն, բաբելոնեցի և էլամերեն): Երեք բաժինների միջև էական տարբերություններ չկան. տարբերվում են հատուկ անունների գրությունները: Պարսկերեն, բաբելոնեցի և էլամերեն բաժիններում, համապատասխանաբար, Անուրամագդան կոչվում է Աուրամագդա, Ախուրամագդա, Օրամագդա, Քսերքսեսը՝ Խշայարշա, Խիշի՝արշա, Իկսերիսսա, Դարեհը՝ Դարայավաուշ, Դարի՝ամուշ, Դաբիյավաու⁴⁷: Բերում ենք գլխավոր՝ պարսկերեն բաժնի թարգմանությունը (զիտության մեջ տարածված անվանաձևերով)⁴⁸.

«Մեծ աստված է Անուրամագդան՝ մեծագույնն աստվածներից, որ արարեց այս աշխարհը, որ արարեց այն երկինքը, որ ստեղծեց մարդուն, որ՝ մարդկանց՝ համար՝ հաճությամբ ստեղծեց, որ Քսերքսեսին դարձրեց թագավոր՝ միակ թագավոր բոլորին, միակ՝ հրամանատար բոլորին:

Ես Քսերքսեսն եմ՝ արքա մեծ, արքա արքաների, արքա բազում ժողովուրդների երկրների, արքա այս մեծ աշխարհի և որդին Դարեհ արքայի, Աքեմենյան: Քսերքսես արքան ասում է. – Դարեհ արքան, որն իմ

*հայրն էր, շնորհիվ Անուրամագրայի բազում վայելություններ կատարեց
և այստեղ հրամայեց քանդակել, սակայն արձանագրություն գրել չտվեց.
ասպա ես հրամայեցի այս արձանագրությունը գրել:*

*Թո՛ղ Անուրամագրան (մյուս) աստվածների հետ պաշտպանի ինձ
և թագավորությունն իմ և ինչ հիմնել եմ ես»⁴⁹:*

Արձանագրությունը կարևոր վկայագիր է Հայաստանի Ք. ա. VI-V դարերի պատմության վերաբերյալ. այն անուղղակիորեն կարող է վկայել Անուրամագրայի պաշտամունքին նվիրված կրոնական բարեվախճան ուրարտում նաև Հայաստանի ընդգրկվելու մասին: Պատմական նշանակությունից զատ, նշենք, որ սա նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված միակ եռալեզու արձանագրությունն է:

Նախամաշտոցյան Հայաստանի լատիներեն արձանագրությունները: Հայաստանի մինչմաշտոցյան ժամանակաշրջանի գրավոր հուշարձանների շարքում կարևոր տեղ գրավող լատիներեն արձանագրությունները վերաբերում են հռոմեական բանակների՝ Հայաստան կատարած արշավանքներին և կանգնեցված են բացառապես օտարների կողմից: Ուստի պետք է հրաժարվել հայագիտության մեջ տարածում գտած այն մտեցումից, ըստ որի՝ լատինական գիրը հուրականի ու արամեականի կողքին համարվում է նախամաշտոցյան Հայաստանում կիրառված այբուբեններից մեկը:

Նախամաշտոցյան Հայաստանի լատիներեն արձանագրությունները կապվում են Հռոմեական կայսրության արևելյան քաղաքականության հետ և հայտնաբերվել են հայկական երեք թագավորությունների (Մեծ Հայք, Փոքր Հայք և Կոմմագենե) տարածքներից:

Մեծ Հայքի լատիներեն արձանագրությունները հայտնաբերվել են երեք՝ Վաղարշապատի (Էջմիածնի), Արաաշատի և Խարբերդի շրջաններից: Դրանցից առաջինը 1863 թ. հայտնաբերված Վաղարշապատի (Էջմիածնի) լատիներեն արձանագրությունն է, ինչից իմանում ենք, որ այն կանգնեցվել է 185 թվականին՝ Կոմոդոս կայսեր օրոք, հռոմեական XV Ապուլինարիս (Ապոլոնյան) լեգեոնի հրամանատարների կողմից⁵⁰:

Արձանագրությունից ջնջվել է Կոմոդոսի անունը: Դա, ըստ երևույթին, կապվում է 193 թվականին հռոմեական սենատի կողմից նրա, որպես անարժան կայսեր, անունը մոռացության մատնելու որոշման հետ, որի ընդունումից հետո հիշատակարաններից սկսեցին հանել, ոչնչացնել Կոմոդոսի անունը: Իսկ դա նշանակում է, որ հռոմեական լեգեոնները մինչև այդ թվականը գտնվել են Հայաստանում⁵¹:

Վաղարշապատից (Էջմիածնից) գտնված մյուս լատիներեն արձանագրությունը, որը հայտնի դարձավ 1907 թվականին, վերաբերում է Մարկոս Ավրելիոս կայսեր իշխանության ժամանակաշրջանին: Դատե-

լով արձանագրության մեջ կայսեր տիադոսաշարից՝ այն պետք է կանգնեցված լինի 173–176 թվականների միջև, երբ Հայաստանում Հռոմի շահերն էին պաշտպանում հռոմեական զորաբանակներից երկուսը՝ XV Ապոլինարիս (Ապոլոնյան) և XII Ֆուլմինատա լեգեոնները⁵²:

1967 թ. Վաղարշապատի (Էջմիածնի) պեղումների ընթացքում բացված դամբարաններից մեկում, կարասային թաղման կավե կառուցվածքի վրա գտնվեց «*լեգեոն չորրորդ սկյութական*» լատիներեն մակագրությունը⁵³: Դա կապվում է նույն թվականին Արտաշատից գտնված Տրայանոս կայսեր արձանագրության հետ (տե՛ս ստորև). երկու արձանագրություններն էլ վերաբերում են 114–116 թթ. պատմական իրադարձություններին:

Խարբերդի շրջանից լատիներեն երեք արձանագրություններ են գտնվել 1879 և 1883 թվականներին. երեքն էլ՝ նույն բովանդակությամբ (սակայն բառացի չկրկնելով մեկմեկու), երեքն էլ՝ հայկական գյուղերի եկեղեցական շինությունների շարվածքում: Առաջին երկուսը (գտնված 1879 թ.) հայտնաբերվել են Խարբերդից 2–3 կմ հարավ–արևելք ընկած Կեզրիկ գյուղից և պահպանվել են բավականին լավ⁵⁴: Երրորդը գտնվել է 1883 թ. Կովանք գյուղից (Կեզրիկից դեպի հարավ–արևելք). հետագա դարերում այս արձանագրության վրա փորագրվել է մեծ խաչ, որի հետևանքով լատիներեն բնագիրը մեծապես տուժել է, սակայն պահպանված հատվածները ցույց են տալիս, որ այն մախրող երկուսի կրկնօրինակներից է: Բնագրերի համընկնող թարգմանությունը հետևյալն է. «*Ներոն Կլավդիոս, Կեսար, Օգոստոս, Գերմանիկոս, Իմպերատոր, Գերազույն քուրմ, իր տրիբունական իշխանության տասնմեկերորդ տարին, իր չորրորդ կոմսությունը, իններորդ անգամ [հռչակված] իմպերատոր, հայրենիքի հայր: Գնեոս Դոմիտիոս Կորբուլոնի՝ Օգոստոսի լեգատի, պրոպրետորի, և Տիտոս Ավրելիոս Ֆուլվոսի՝ Օգոստոսի լեգատի օրոք, III Գալլիական լեգեոն*»⁵⁵:

Արձանագրությունները կանգնեցվել են 64 թվականին: Դրանք վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Մեծ Հայքի գահի համար 52 թվականից սկսված ռազմական գործողություններն ավարտվեցին հռոմեական զորքերի՝ հայ–պարթևական ուժերից Հռանդեայում կրած խայտառակ պարտությամբ (62 թ.), որից հետո նույն վայրում 64 թվականին կնքվեց հաշտություն, որով Արշակունյաց արքայատոհմը հաստատվեց Մեծ Հայքում:

Քարե սալերի վրա արձանագրություններն առնված են քառակուսի շրջանակների մեջ. դրանք, հավանաբար, դրվել են այն շինության (կամուրջ կամ ամրոց) պատի մեջ, որը կառուցվել է բանակցություններում Հռոմը ներկայացնող, Արևելքի զորքերի հրամանատար նշանակված Գնեոս Դոմիտիոս Կորբուլոնի կողմից⁵⁶:

Արտաշատի շրջանից ևս հայտնի են երեք լատիներեն արձանագրություններ՝ գտնված Ալեքսու և Փոքր Վեդի գյուղերից: Ալեքսուից հայտնաբերվել է սպիտակ քարից պատրաստված սյան բեկոր, որի վրա ընթերցվում են միայն «իմպերատոր», «կեսար», «աստվածային» բառերը (հապավումներով): Ալեքսուն գտնվում է Հին Արտաշատի (ներկայիս Խոռ Վիրապի) դիմաց, Արաքսի հանդիպակաց ափին, ուստի և արձանագրության բեկորը պետք է համարել Հռոմի կայսրերից մեկի՝ հայոց մայրաքաղաքի հետ կապված ինչ-որ ձեռնարկի իրեղեն վկայություն⁵⁷:

1967 թ. պատմական Արաաշատ մայրաքաղաքի հյուսիս-արևելյան սահմաններում գտնվող ներկայիս Փոքր Վեդի գյուղի հարավ-արևելյան եզրին կատարված շինարարական աշխատանքների ժամանակ 1,4 մ խորության վրա հայտնաբերվեցին երկու լատիներեն արձանագրություններ⁵⁸: Դրանցից առաջինը եռասյա է, ունի շատ խոշոր չափեր (8,5 մ երկարություն և 0,8 մ բարձրություն, առաջին տողի տառերի բարձրությունը 20 սմ է, երկրորդինն ու երրորդինը՝ 16 սմ) և կրում է Հռոմի Տրայանոս կայսեր անունը, իսկ երկրորդը համեմատաբար մանր տառերով գրված զինվորականի տապանաքար է:

Բնագրերը վերաբերում են 116 թվականի երկրորդ կեսին Տրայանոս կայսեր՝ դեպի Հայաստան կատարած արշավանքին: Խոշոր արձանագրության վնասված մասերը հաջողվում է վերականգնել և ընթերցել. *«Իմպերատոր Կեսար աստվածային, Ներվայի որդի Ներվա Տրայանոս, Օպտիմոս (լավագույն), օգոստոս (վեհափառ), Գերմանիկոս (Գերմանական), Դակիկոս (Դակիական), Պարթևիկոս (Պարթևական), Գերագույն քուրմ, Մաքսիմոս (մեծագույն), տրիբունի իշխանությանը (օժտված) 20 անգամ, կայսր (հռչակված) 13 անգամ, հյուպատոս 6 անգամ, [հայրենիքի հայր ?]. սկյութական լեզուներ կատարեց (կանգնեցրեց)»*:

Տապանաքարի տասը տողերից պահպանվել են առաջին չորսը, իսկ մյուսներից՝ միայն առանձին տառեր: Գրությունը հետևյալն է. *«Մտորեղկոյա աստվածներին (մաներին), Կայուս Վալ(երիուս) Կրե..., զինվոր իտալիկների I լեգեոնի զորաջոկատի, ծառայեց.... հուշարձանը (?) դրվեց»*:

Ի մի բերելով՝ նշենք, որ Մեծ Հայքից հայտնաբերված լատիներեն ինը արձանագրությունները Հայաստանի I-II դարերի պատմության երեք շրջանների (60-ական թվեր, երբ Արշակունյաց արքայատոհմը հաստատվում էր Մեծ Հայքի գահին, 114-116 և 160-190-ական թթ.) կարևոր սկզբնաղբյուրներ են և լրացնում են դարաշրջանի մասին մատենագրական հաղորդումներից մեր ստացած գիտելիքները:

Ինչպես Մեծ Հայքից, այնպես էլ Փոքր Հայքից և Կոմմագենեից հայտնաբերված լատիներեն արձանագրությունները հիմնականում վերաբերում են հռոմեական բանակների արևելյան արշավանքներին:

Դրանցում հստակ առանձնանում է երկու խումբ՝ հռոմեական զորամասերի տեղակայման մասին վկայող արձանագրություններ, որոնցում տեղեկություններ են հաղորդվում հռոմեական կայսրերի ու զորավարների վերաբերյալ, և զինվորների տապանագրեր⁵⁹:

Օտարների թողած հումարեն արձանագրությունները: Հունագիր հուշարձանները Հայկական լեռնաշխարհում բաժանվում են երկու խմբի՝ տեղացիների հեղինակած և օտարների կողմից թողնված: Առաջիններին արդեն անդրադարձել ենք համապատասխան բաժնում, իսկ երկրորդ խմբի բնագրերը (ինչպես լատիներեն արձանագրությունները) կապվում են Հռոմի արևելյան քաղաքականության հետ:

Հռոմեական զորականների կողմից Հայաստանում թողնված արձանագրությունների մեջ կան մաև հումարեն տապանագրեր: Դրանցից մեկը հայտնաբերվել է 1914 թ. Վաղարշապատից: Դամբանական արձանագրությունը կանգնեցվել է II դարի երկրորդ կեսին: Հեղինակը զինվորական տրիբունն էր XV Ապուլոնյան լեզեռնի, որի մասին արդեն զիտենք Վաղարշապատում 173-176 և 185 թվականներին թողնված լատիներեն արձանագրություններից: Տապանագիրը հետևյալն է.

«Ի հիշատակ Էլիի Մաքսիմի՝ ամուսնու, որն ապրեց 35 տարի, և Էլիի Վալենտինի՝ դստեր, որն ապրեց 13 տարի, Էլիի Վալենտը՝ XV Ապուլոնյան լեզեռնի զինվորական տրիբունը, նրանց ամուսինն ու հայրը, նվիրեց (աստվածներին)»⁶⁰:

Սի քանի հումարեն տապանագրեր են հայտնաբերվել Քենքից (Եփրատի արևմտյան ափին, Այնթապից (Գազիանթեպից) շուրջ 60 կմ հյուսիս-արևելք), Սալմանասար Գ-ի վերոհիշյալ արձանագրությունից ոչ հեռու⁶¹:

1978 թ. Եղեգնաձորի շրջանի Արենի գյուղի մոտ կատարված ճանապարհաշինական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեց ոչ մեծ քարե մի զոհասեղան՝ «Էմիլիոս Վալես. Մայր Երկրին՝ Օլյուպրի աստվածուհի տիրուհուն» արձանագրությամբ: Արձանագրության առանձնահատկությունների և ժամանակաշրջանի պատմա-քաղաքական իրադարձությունների քննությունը թույլ է տալիս այն թվագրելու 163-164 թվականներով⁶²:

Նշենք, որ սրանցով չեն սահմանափակվում օտարների կողմից նախաձեռնված Հայաստանում թողնված հումարեն արձանագրությունները. մենք տեղյակ ենք մի քանի արձանագրությունների մասին (հատկապես Փոքր Հայքի և Կոմմագենեի տարածքներում), որոնց այստեղ չենք անդրադառնում ձեռքի տակ համապատասխան գրականություն չունենալու պատճառով:

Հայաստանից հայտնաբերված օտար ծագումով դրամները: Արձանագրություններից հետո, պատկերն ամբողջացնելու նպատակով,

ստորև ժամանակագրական հերթականությամբ կներկայացնենք նույն-
պիսի ծագում ունեցող գրակիր դրամների խմբերը:

Հայաստանից հայտնաբերված վաղագույն դրամները (Ք. ա. VI-V դդ.) գրակիր չեն. դրանք, այսպես կոչված, «միլեթյան» տեսակի ար-
ծաքեն դրամներն են, որոնց մի երեսին առյուծի գլուխ է պատկերված,
մյուսին՝ բուսական մախշ (կամ ռճավորված հավասարաթև խաչ): Երկու
այդպիսի դրամներ գտնվել են Էրեբունիի պալատական տաճարի ներ-
սում, նվիրատվության սեղանի մոտ⁶³: Ք. ա. VI-V դարերով են քվագր-
վում մահ Հայաստանից գտնված աթենական և արքենյան դրամները⁶⁴:

Ք. ա. IV դարում Հայաստանում տարածում են գտնում մակեդո-
նական (Ալեքսանդր Մեծի, նրա որդի Ֆիլիպ III-ի անուններով մակագր-
ված) դրամները, նույն դարավերջի հռոդոսյան դրամ է գտնվել Արմավի-
րից⁶⁵:

Ք. ա. III-I դարերում օտար դրամական միավորներից Հայաստա-
նում լայնորեն կիրառվում են սելևկյան, փյունիկյան, կապադովկիական,
պարթևական (Ք. ա. II-I դդ.), պոնտական (Ք. ա. II-I դդ.), փոքրասիա-
կան Պերգամոն և Եփեսոս քաղաքների հունագիր դրամները⁶⁶:

Ք. ա. I-ից Ք. հ. III դարի կեսերին հայաստանյան դրամաշրջա-
նառության մեջ մեծ տարածում են ստանում հռոմեական լատինագիր
դրամները, որոնց կիրառությունը հետագայում նվազում է⁶⁷:

Ք. հ. III դարի կեսերից մինչև V դարի սկիզբը հայաստանյան
առևտրում գերակշռում են սասանյան պահլավագիր դրամները⁶⁸:

Ահա այսպիսին է մախամաշառցյան Հայաստանի դրամաշրջա-
նառության ընդհանուր պատկերը. տարածված դրամների հիմնական
խմբերը կրում են հունարեն, լատիներեն և պահլավերեն գրություններ:
Հասկանալիորեն, օտար ծագումով դրամները չի կարելի կապել տեղա-
կան դայրության հետ, սակայն այդ դրամների լայն կիրառությունը երկ-
րում կարող է ցույց տալ ժողովրդի որոշակի խավերի (թեկուզև մասնա-
կի) ծանոթությունը դրանց մակագրությունների գրերին և լեզուներին:
Բացի այդ, Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված օտար ծագու-
մով դրամների խմբերը մեկ անգամ ևս ընդգծում են Հայաստանի խաղա-
ցած կարևոր դերը Հին Աշխարհի քաղաքակրթության խաչմերուկներում:

Ամվափելով՝ մեկ անգամ ևս նշենք, որ օտարների թողած գրային
հուշարձանները թեպետ չեն կազմում հայաստանյան դայրության քաղ-
կացույցի մասը, սակայն մախամաշառցյան Հայաստանի պատմության
կարևոր և անգնահատելի սկզբնաղբյուրներ են, մանավանդ այն դեպքե-
րում, երբ չունենք տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ տեղացիների
թողած վկայագրեր...

ARTAK MOVSISYAN

INSCRIPTIONS MADE BY FOREIGNERS OF PRE-MASHTOTSIAN
ARMENIA AND THEIR HISTORICAL ESTIMATION

In article are considered pre-Mashtotsian inscriptions of Armenia, which were found in the territory of Armenian Highland, but were made by foreigners. In the territory of pre-Mashtotsian Armenia were found Akkadian, Hurrian, old, middle and new Assyrian, old and middle Babylonian, Persian (Achaemenid), Elamite cuneiform, Egyptian hieroglyphic, Latin and Greek alphabetic inscriptions. In article attempt to give a historical estimation of these inscriptions also is made.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արման(ի/ում) երկրի ճշգրիտ՝ հայաստանյան տեղադրության առաջին հիմնավորումները տես Գարանֆիլեան Հ. Գ., Նարամ-Սին եւ իր թշնամիներն ըստ հասանքի, «Հանդես Ամսօսայ, 1929, N 5, էջ 287-288; Rigg H. A., A Note on the names Armānum and Urartu, "Journal of American Oriental Society", 1937, vol. 57, 4, էջ 416-418: Այդ ուղղությամբ կատարված հետագա աշխատանքների մասին (գրականության հղմամբ) տես Մովսիսյան Ա. Ե., Արմանի-Արմի երկիրն ըստ աքադական եւ էրլայական աղբյուրների, «Հայկագեան Հայագիտական Հանդես», 1993, հ. ԺԳ, էջ 113-127, Մատթեոսեան Վ., Սեպագիր աղբյուրներու Արման երկիրը, ՀԱ, 1994, ք. 1-12, էջ 255-268:
2. Barton G. A., The Royal Inscriptions of Sumer and Akkad, New Hawen, 1929, էջ 140-141 (քննադրի առաջին երապարակումների հղումներով); կոթողի գտնվելու հանգամանքները և քննադրական մանրամասները տես Naab J. P., Unger E., Die Entdeckung der Stele des Naram-Sin in Pir Hüsein (քաղկացած է երկու քաժնից՝ I Naab J. P., Die Entdeckung der Stele des Naram-Sin in Pir Hüsein; II. Unger E., Naram-Sin in Assyrien und Armenien), Istanbul Asariatika Müzeleri Nerşiyati, XII, Istanbul, 1934 (թուրքերեն և գերմաներեն), էջ 5-48, աղ. I-IV: Արձանագրությունն ունեցել է քաղմաթիվ վերահրատարակումներ:
3. Անունը նախապես ընթերցվում էր Թիշարի, վերջերս վերանայվեց և առավել ընդունելի համարվեց «Թիշաթա» տարբերակը (Wilhelm G., Die Inschrift des Tisatal von Urkes, "Bibliotheka Mesopotamica", 26, 1998, էջ 120-121):
4. Kammhuber A., Historisch-geographische Nachrichten aus der althurrischen Überlieferung, dem Altelamischen und den Inschriften der Könige von Akkad für die Zeit vor dem Einfall der Gutäer (ca. 2200-2136), "Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae", t. 22, 1-4, էջ 164:
5. «Էնդանը» քրմական տիտղոս է:
6. Дьяконов И. М., Языки древней Передней Азии, М., 1967, էջ 443-445; Diakonoff I. M., Hurrisch und Urartäisch, München, 1971, էջ 110; Wilhelm G.,

- Grundzüge der Geschichte und Kultur der hurriter, Darmstadt, 1982, էջ 15–16; Wilhelm G, Die Inschrift..., էջ 119–120:
7. Дьяконов И. М., Языки ..., էջ 444:
 8. Հմարավոր է երկրամիջին «խորհրդանշական» ընթերցումը: Ըստ հրատարակչի՝ խորհրդանշական տիրակալը (կամ Բելը) պետք է նույնացվի Աշուրբանակալի զրադարանից հայտնի Ներգալ-խորհրդանշական հետ, որը համարվել է ամորաշխարհի աստվածություն (Güterbock H. G., A Votive Sword with Old Assyrian Inscription, Studies in honour of B. Landsberger in his 75th birthday, Assyriological Studies N. 16, Chicago, 1965, էջ 197–198):
 9. 12 միման հավասար է 6 կիլոգրամի. դարերի ընթացքում քայքայման ենթարկվելով՝ այն ներկայումս կշռում է մոտ 5 կիլոգրամ (Güterbock H. G., նշվ. աշխ., էջ 197):
 10. Güterbock H. G., նշվ. աշխ., էջ 197–198, ադ. XIII–XV:
 11. Մասնավորապես, ուշագրավ տվյալներ կարելի է ստանալ հատուկ ամունների վերլուծությունից: Խորշալ(ում) կամ Խորհրդանշալ(ում) երկրանունը, ինչպես նշում է հրատարակիչը (Güterbock H. G., նշվ. աշխ., էջ 197), իր կազմությամբ ակնհայտորեն հիշեցնում է Ապիշալ(ամ) երկրանունը, որը Արման(ում) ի համարժեքն է: Ի վերջո, եթե հմարավոր լինի ցույց տալ, որ Լուպուան(ում) ը տեղաբնակ է, արձանագրված թուրը կարելի է դասել Հայաստանի քնիկների կողմից օտար լեզուներով ու գրերով թողած բնագրերի շարքը:
 12. Ханзадян Э. В., Пиотровский Б. Б., Цилиндрическая печать с древнеегипетской надписью из Мецаморского могильника, «Мшхатա-րանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԸՀ), 1984, N 4, էջ 65:
 13. Ханзадян Э. В., Саркисян Г. Х., Дьяконов И. М., Вавилонская гиря XVI в. до н. э. с клинописной надписью из раскопок Мецамора, «Древний Восток», 4, Ереван, 1983, էջ 113–122:
 14. Այդ մասին մեր մախնական դիտարկումները հայտնել ենք համաժամանակի մամուլում (տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Փառքի մի դարաշրջան ևս, «Հայ զինվոր», 1995, NN 46 (97) – 47 (98) ; Մովսիսյան Ա. Ե., Եվ Բաբելոնիան կռչվեց... «Հայաստան», «Շրջան», 1996 (d), N 2):
 15. Հմմտ. Փիլիպոսյան Ա. Ս., Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագրության համակարգում, Ե., 1998, էջ 101–102:
 16. Mesčaninov J., Weidner E. F., Votivperle mit assyrischer Königs-Inschrift aus Transkaukasien, «Archiv für Orientforschung», 1931–1932, Bd. VII, էջ 266–268; Мещанинов И. И., Загадочные знаки Причерноморья, «Известия Гос. Академия истории материальной культуры», вып. 62, Л., 1933, էջ 52–53; Кушнарёва К. Х., Ходжалинский могильник, ՊԸՀ, 1970, N 3, էջ 114–115; Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, N 2–4 (այսուհետ՝ АВИИУ), N 36: Ասորեստանի արքաներից ոչ մեկի արշավանքները չեն հասել Արցախի տարածք, հետևաբար զրակիր առարկան այնտեղ պետք է հայտնված լինի այլ ճանապարհով:
 17. Թիզրաթարասար Ա-ի դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների մասին տե՛ս Ադունց Ն., Հայաստանի պատմություն, Ե.,

- 1972, էջ 54-66; Пиотровский Б. Б., Ванское царство (Урарту), М., 1959, էջ 44-46; Арутюнян Н. В., Биайнили, Е., 1970, էջ 29-52:
18. Տիգրիսի վերին հոսանքի ձախակողմյան վտակ Սուրմատը (ներկայումս՝ Ջերենե-սու) որոշակի մի տարածք հոսում է ժայռի ստորին մասով, որի ժայռից արտահոսելու վայրը՝ «Տիգրիսի թունելը», Միջագետքի հնաքննակները համարում էին Տիգրիս սրբազան գետի ակունքը, ռատի այնտեղ հասնելը միջագետքյան հերոսների համար պաշտամունքային նշանակություն ունեցող մեծագործություն էր: «Տիգրիսի թունելի» ելքի ժայռին փորագրված են ասորեստանյան արքաներ Թիգլաթպալասար Ա-ի և Սալմանասար Գ-ի հինգ արձանագրություններ: Դրանցից երկու վատ պահպանվածները սկզբնապես վերագրվել են Թուկուլթի-Նինուրթա Բ-ին և Աշուրնասիրպալ Բ-ին, սակայն հետագայում ճշգրտվել է դրանց հեղինակի ինքնությունը (Schrader E., Die Keilinschriften am Eingange der Quellgrotte des Sabeneh-su, Berlin, 1885, էջ 3-31; Սամալյան Հ., Ասորեստանաց և պարսիկ սեպագիր արձանագրությունք կամ քաղաածք նոցին, որոնք Նաիրի-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբերին, Վիեննա, 1901, էջ 106-108, 131, 151-152; ճշգրտումը՝ Lehmann-Haupt C. F., Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Abhandlungen der Königlich Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, Philologisch-historische Klasse, Neue Folge, Band IX, Nro. 3, Berlin, 1907, էջ 16-18, 31-44; Lehmann-Haupt C. F., Armenien Einst und Jetzt, I, Berlin und Leipzig, 1910, էջ 430-462 (եղված աշխատանքներում Սալմանասար Գ-ն (ժամանակի գիտության տվյալների համաձայն) համարվում է Սալմանասար Բ); АВИИУ, NN 16, 32, 33):
 19. Schrader E., նշվ. աշխ., էջ 7-8, 27; Սամալյան Հ., նշվ. աշխ., էջ 106-107; Lehmann-Haupt C. F., Materialien ..., էջ 16-18; АВИИУ, N 16:
 20. Սամալյան Հ., նշվ. աշխ., էջ 106 (Սամալյանի մոտակայքում արձանագրության գտնվելու վայրն այստեղ կոչվում է «Կոճանլա», այլ տեղերում՝ Յունջալու); Lehmann-Haupt C. F., Materialien ..., էջ 15-16; Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 59-60; АВИИУ, N 17:
 21. Քարխը (Քուրխ, Կուրխ) Դիարբեքիից շուրջ 30 կմ (20 անգլիական մղոն) հարավ-արևելք գտնվող վայր է Տիգրիսի աջ ափին, որը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Թուշսան երկրին (Арутюнян Н. В., Топономика Урарту, Е., 1985, էջ 191-192): Այնտեղից գտնված արձանագրված մեմարարը դեռևս XIX դարում անդավախվել է Բրիտանական թանգարան (Լոնդոն). մասնագիտական գրականության մեջ այն սովորաբար հանդես է գալիս «Թուշսանի կամ Քարխի մեմարար» անվամբ: Ունեցել է քաղմաթիվ հրապարակումներ (ահ'ս օրինակ Սամալյան Հ., նշվ. աշխ., էջ 140-143; АВИИУ, N 26 և 27):
 22. Այդ արշավանքների երթուղիների հանգամանալի վերլուծությունը տե՛ս Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 70-76; Пиотровский Б. Б., Ванское ..., էջ 52-60; Арутюнян Н. В., Биайнили, էջ 66-99:
 23. Schrader E., նշվ. աշխ., էջ 9-31; Սամալյան Հ., նշվ. աշխ., էջ 108, 131, 151-152; ճշգրտումը՝ Lehmann-Haupt C. F., Materialien ..., էջ 31-44; Lehmann-Haupt C. F., Armenien ..., I, էջ 430-462; АВИИУ, NN 32, 33):

24. Schrader E., նշվ. աշխ., էջ 13, 18, 28, 29; Սանսալմեան Հ., նշվ. աշխ., էջ 108, 131:
25. Ներքին Ջամուայի ծովն Ուրմիա լիճն է, Քաղղեսկան ծովը՝ Պարսից ծոցը:
26. Lehmann-Haupt C. F., *Materialien* ..., էջ 31–35; АВИИУ, N 32:
27. Lehmann-Haupt C. F., *Materialien* ..., էջ 36–38; АВИИУ, N 33:
28. Քենքը (Քենք Ջոքը կամ Քենք Բողազի) գտնվում է Եփրատի արևմտյան ափին, Այնթապից (Գազիանթեպից) շուրջ 60 կմ հյուսիս-արևելք: Արքայի պատկերն ու արձանագրությունը քանդակված են ժայռի վրա, գետի մակարդակից մոտ 50 մ բարձրության վրա (Taşyürek O. A., *A Rock Relief of Shalmaneser III on the Euphrates, "Iraq"*, 1979, vol. XLI, part 1, էջ 47–50, աղ. XV–XVI, նկ. 1):
29. Ջուդի լեռը գտնվում է Կորդվաց լեռների շրջանում և սեպագրերում հայտնի է Նիքուր անվամբ (տե՛ս Հմայակյան Ս. Գ., Հայկ մահապետի մասին առասպելն ու Կիրշա քաղաքը Նիքուրի լեռներում, ՊԲՀ, 1992, 1, էջ 125–131 և հղված գրականությունը): Որոշ հին ավանդազրույցներում, որոնք անդ են գտել նաև Ղուրանում (11, 38–46), այն համարվում է ջրհեղեղից հետո փրկության լեռ:
30. Այդ մասին իմանում ենք Սինախերիբի ժամանակագրությունից՝ քանդակված «Թեյլորի վեցանիստ պրիզմայի» վրա (АВИИУ, N 57):
31. АВИИУ, N 58:
32. Այս հնթարածնի նյութերի տրամադրման համար շնորհակալություն ենք հայտնում պ. գ. ք. Երվանդ Գրեկյանին:
33. Dyson R. H., *The Hasanlu Project, 1961–1967*, in "V International Congress of Iranian Art and Archaeology", Tehran–Isfahan–Shiraz, 11–18, April, 1968, էջ 49, նկ. 8–9:
34. Medvedskaya I. N., *Who Destroyed Hasanlu IV?*, "Iran", 1988, vol. 26, էջ 1:
35. Muscarella O. W., *Chronologies in Old World Archaeology 1969–1970, Hasanlu in the Ninth Century B. C. and its Relations with other Cultural Centres of the Near East*, "American Journal of Archaeology", vol. 75, 1971, էջ 263–266, աղ. 63:
36. Dyson R. H., *The Architecture of Hasanlu: Periods I to IV*, *AJA*, vol. 81, 1977, էջ 548–552:
37. Salvini M., Pecorella P. E., *Tra lo Zagros e l'Urmia, "Incunabula Graeca"*, vol. 78, Roma, 1984, էջ 55:
38. Dyson R. H., *Protohistoric Iran as Seen from Hasanlu*, "Journal of Near Eastern Studies", vol. 24, No. 3, 1965, էջ 202; Dyson R. H., Muscarella O. W., *Constructing the Chronology and Historical Implications of Hasanlu IV, "Iran"*, vol. 27, 1989, էջ 1–26; Medvedskaya I. N., նշվ. աշխ., էջ 12:
39. Grayson A. K., *Assyrian Rulers of the Early First Millennium BC (858–745 BC)*, *The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods*, vol. III, Toronto, 1996, էջ 65, 75, 104:
40. Dyson R. H., Muscarella O. W., նշվ. աշխ., էջ 23:

41. Grayson A. K., Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. I, Toronto, 1987, էջ 308:
42. Дьяконов И. М., Янковская Н. Б., Эламский диалог Гильгамеша и Сидури и другие эламские тексты из Аргистихинеле (Армавир), ՊԲՀ, 1989, N 2, էջ 55–62; Diakonoff I. M., Jankowska N. B., An Elamite Gilgamesh Text from Argistihenele, Urartu (Armavir-blur, 8th century B. C.), "Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie" (այսուհետ՝ ZA), 1990, Bd. 80, 1, էջ 102–123:
43. Koch H., Elamisches Gilgames-Epos oder doch Verwaltungstafelchen ?, ZA, 1993, Bd. 83, II, էջ 219–236; Vallat F., La lettre elamite d'Arménie, ZA, 1995, Bd. 85:
44. Ханзадян Э. В., Пиотровский Б. Б., նշվ. աշխ., էջ 59–65 կնիքը հայտնաբերել է Է. Վ. Խանգադյանը, արձանագրությունը Օ. Դ. Բերկի օգնությամբ ընթերցել է Բ. Բ. Պիոտրովսկին:
45. Пиотровский Б. Б., Древнеегипетские предметы, найденные на территории Советского Союза, "Советская археология", 1958, N 1, էջ 20–22:
46. Пиотровский Б. Б., Древнеегипетские ..., էջ 20–22; Пиотровский Б. Б., Кармир–Блур, I, Ереван, 1950, էջ 84; Пиотровский Б. Б., Кармир–Блур, III, Ереван, 1955, էջ 54:
47. Երեք լեզուներով բաժինների համեմատական հրատարակությունը՝ համապատասխան հղումներով, տե՛ս Սանտալճեան Հ., նշվ. աշխ., էջ 224–226 (հեղինակի մոտ էլամերեն բաժինը կոչվում է «մարական խմբագրություն»):
48. Պարսկերեն բաժնի քարգմանությունը տալիս ենք ըստ Հ. Սանտալճյանի և Ռ. Գ. Ջենթի (Սանտալճեան Հ., նշվ. աշխ., էջ 224–226; Kent R. G., Old Persian. Grammar, Texts, Lexicon, Parts I–III, New Haven, 1953, էջ 152–153):
49. Արձանագրության վերջը բերում ենք ըստ Ռ. Գ. Ջենթի: Հ. Սանտալճյանի մոտ վերջում կա հավելում՝ «...և իմ գործերը»:
50. Արձանագրությունն ունեցել է քազմաթիվ հրապարակումներ: Չափազրական տվյալները, քարգմանությունը, հնագրական և հարակից պատմա–բանասիրական հարցերի քննությունը տե՛ս Тревсер К. В., Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. – IV в. н. э.), М. – Л., 1953, էջ 267–270 (էջ 268–ի ծանոթ. 1–ում՝ առաջին հրապարակումների հղումները դրանցից մեկը՝ Ալիշան Դ., Այրարատ, Վենետիկ, 1880, էջ 206):
51. Тревсер К. В., նշվ. աշխ., էջ 269–270: Կա կարծիք, որ արձանագրության մեջ հիշվող կայսրը ոչ թե Կոմոդոսն է, այլ նրա հայր Մարկոս Ավրելիոսը, իսկ ջնջված քաղը եղել է «Հայկական» տիտղոսը, որը մատնանշել է նրա կողմից՝ Հայաստանի նվաճումը, ռաաի և ոչնչացվել է հայ հայրենասերների կողմից (տե՛ս օր.՝ Արրահամյան Ա. Գ., Հայ գրի և գրչության պատմություն, Ե., 1959, էջ 31–32; Արրահամյան Ա. Գ., Հայոց գիր և գրչություն, Ե., 1973, էջ 38): Վերջին կարծիքը քիչ հավանական է, քանի որ, եթե դա արվեր հայ հայրենասերների կողմից, կոչնչացվեր

- քննական գործերի մասին վկայող արձանագրությունն ամբողջությամբ, ոչ թե միայն կայսեր մեկ ախաղասը:
52. Արձանագրության չափագրության, քարգմանության, ժամանակաշրջանի պատմական իրադրության քննության և հարակից հարցերի մասին տես Tpesep K. B., նշվ. աշխ., էջ 262-267:
 53. Թորոսյան Ռ. Մ., Կրկյաշարյան Ս. Մ., Հնագիտական նորություններ Էջմիածնից, ՊԲՀ, 1971, N 1, էջ 287-290:
 54. Դրանցից մեկի էսաամպածն՝ արված Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի կողմից, տես Lehmann-Haupt C. F., Armenien ..., I, էջ 478:
 55. Lehmann-Haupt C. F., Armenien ..., I, էջ 477-478: Արձանագրությունների առաջին հրապարակումների հղումները, չափագրական տվյալները, քարգմանությունը, հնագրական և հարակից պատմա-քանասիրական հարցերի քննությունը տես Tpesep K. B., նշվ. աշխ., էջ 212-223:
 56. Հմմտ. Tpesep K. B., նշվ. աշխ., էջ 222-223:
 57. Tpesep K. B., նշվ. աշխ., էջ 223-224 (տես նաև հղումները):
 58. Արձանագրությունների առաջին հրատարակությունը՝ լուսանկարներով, գծանկարներով, քարգմանությամբ և ժամանակաշրջանի պատմա-քաղաքական դեպքերի մանրամասն վերլուծությամբ տես Առաքելյան Բ. Ն., Լատիներեն արձանագրություններ Արաաշատ մայրաքաղաքից, ՊԲՀ, 1964, N 4, էջ 302-311:
 59. Կոմմագենից հայտնաբերված արձանագրությունները տես Jalabert L., Mousterde R., Inscriptions grecques et latines de la Syrie, t. I, Commagene et Cyrhestique, Paris, 1929, էջ 42-46, 59-61: Փոքր Հայքի արձանագրությունները Olschhausen E. und Biller J., Historisch-geographische Aspekte der Geschichte des Pontischen und Armenischen Reiches, Teil 1, Untersuchungen zur historischen Geographie von Pontos unter Mithradatiden, Wiesbaden, 1984, էջ 101: Ավելացնենք, որ նշվածներով չի սահմանափակվում Փոքր Հայքի և Կոմմագենի լատիներեն արձանագրությունների ցանկը:
 60. Ժեքելյով Ս. Ա., Հունարեն դամբանական արձանագրություն գտնված Վաղարշապատում, տես Քալանթար Ա., Հին Վաղարշապատի պեղումները, Յեր., 1935, Հավելված I (հայերեն և ռուսերեն), էջ 75-83 (հայերեն և ռուսերեն):
 61. Taşyürek O. A., նշվ. աշխ., էջ 47: Այս տապանագրերի բնագրերը մեզ հայտնի չեն: Դրանք պայմանականորեն ենք օտարների կողմից թողնված, քանի որ հաղորդման մեջ հիշվում են հռոմեական դամբարանների հետ:
 62. Տիր-Մարտիրոսով Ֆ. Ի., Արենիի հունարեն արձանագրությունը (Հայաստանի մ. ք. ա. II դարի քաղաքական իրադարձությունների շուրջը), ՊԲՀ, 1989, N 1, էջ 177-189: Արձանագրության ընթերցման գործում հեղինակին աջակցել է Յ. Վինոգրադովը: Հղվածագիրը հնարավոր է համարում, որ այս արձանագրության հեղինակը ես ծառայած լինի XV Ապոլոնյան լեզեռնում:
 63. Իսրայելյան Մ. Ա., Էրերունի բերդ-քաղաքի պատմություն, Ե., 1971, էջ 104-105, աղ. XI: Խ. Ա. Մուշեղյանը կարծիք է հայտնում, որ դրանք կարող են

լինել ոչ թե Սիլեքում հատված դրամներ, այլ «տեղական դրամագործության արգասիք, ինչպես Բուֆորում մ. թ. ա. V դարում միլեթյան դրամների ընդօրինակությամբ թողարկվում էին տեղական կերտվածքի դրամներ» (Մուշեղյան Խ. Ա., Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. ա. V դ. – մ. թ. XIV դ.), Ե., 1983, էջ 12–14):

64. Մուշեղյան Խ. Ա., Դրամական ..., էջ 11–12, 14–15:
65. Մուշեղյան Խ. Ա., Դրամական ..., էջ 29–30:
66. Մուշեղյան Խ. Ա., Հայաստանի դրամական գանձերը, Ե., 1973, էջ 22–27, 33–35, 63–78, 82–84; Մուշեղյան Խ. Ա., Դրամական ..., էջ 31–35:
67. Մուշեղյան Խ. Ա., Հայաստանի ..., էջ 35–46, 84–123; Մուշեղյան Խ. Ա., Դրամական ..., էջ 35–38, 82–89, 113–114:
68. Մուշեղյան Խ. Ա., Դրամական ..., էջ 110–115: